ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.city@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 ՀՈՒԼԻՍԻ 2023թվականի N 203-Ա

ԼԵՎՈՆ ՀԱՅԿԱԶԻ ՄԽԻԹԱՐՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՅԳԵՏՆԱԿԻ, ԱՅԳԵՏՆԱԿԻ Բ/Պ ԵՎ ԱՎՏՈՏՆԱԿԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ԱՅՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ և 43-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, «Պետական կամ համայնքային հողամասերում գտնվող ինքնակամ կառույցների նկատմամբ պետության կամ համայնքների սեփականության իրավունքի պետական գրանցման կարգը հաստատելու մասին» N 731-Ն որոշմամբ հաստատված կարգով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի 912-Ն որոշմամբ հաստատված կարգերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումով, ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարի 2021 թվականի մայիսի 10-ի «Անշարժ գույքի հասցեավորման հայտի ձևը սահմանելու մասին» N 104-Լ հրամանով, հիմք ընդունելով «ԿԱՐՏՈԳՐԱՖ» ՍՊ ընկերության կողմից տրված կադաստրի կոմիտեում ինքնակամ կառույցի հաշվառման տեղեկանքն ու հողամասի և շինության հատակագծերը և Լևոն Մխիթարյանի /մուտք՝ 30.06.2023թ. թիվ 357/ դիմումը՝

Որոշում եմ.

1. Ճանաչել Թումանյան համայնքի սեփականության իրավունքը Լևոն Հայկազի Մխիթարյանի կողմից համայնքային սեփականություն հանդիսացող կադաստրային քարտեզի06-004-0015-0038 ծածկագրից առանձնացվող, բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0,030626 հա մակերեսով հողամասում գտնվող, ինքնակամ կառուցված, ընդհանուր 21,42 քմ արտաքին մակերեսով (18,3 քմ ներքին մակերեսով) բնակելի նշանակության այգետնակի, 6,67քմ մակերեսով այգետնակի բ/պ և 49,84 քմ արտաքին մակերեսով ավտոտնակի (ներքին մակերեսը՝ 42,94 քմ/) նկատմամբ :

2. Օրինականացնել Թումանյան համայնքի Թումանյան քաղաքում գտնվող, կադաստրային քարտեզի 06-004-0015-0038 ծածկագրից առանձնացվող, բնակավայրերի նպատակային

նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0,030626 հա մակերեսով հողամասում գտնվող, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ կետով սահմանված պայմաններին համապատասխանող, 1989 թվականին ինքնակամ կառուցված, կադաստրի կոմիտեում 2023FVMS2V ծածկագրով հաշվառված, ընդհանուր 21,42 քմ արտաքին մակերեսով (18,3 քմ ներքին մակերեսով) բնակելի նշանակության այգետնակը, 6,67քմ մակերեսով այգետնակի բ/պ և 49,84 քմ արտաքին մակերեսով ավտոտնակը (ներքին մակերեսը՝ 42,94քմ/) :

3. Թումանյան համայնքի Թումանյան քաղաքի կադաստրային քարտեզի 06-004-0015-0038 ծածկագրից առանձնացվող 0,030626 հա մակերեսով անշարժ գույքին տրամադրել փոստային << ՀՀ Լոռու մարզ, Թումանյան համայնք, քաղաք Թումանյան, Կենտրոնական փողոց, 2/2 այգետնակ>> հասցե:

4. Ինքնակամ կառուցված կառույցը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը և վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման, անվտանգության գոտիներում և կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

5. Այգետնակի զբաղեցրած հողամասն ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում:

6. Անշարժ գույքի պետական գրանցում ստանալուց հետո, տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում ինքնակամ կառույցն իրականացրած անձին՝ Լևոն Հայկազի Մխիթարյանին օրինականացված այգետնակը, այգետնակի բաց պատշգամբը, ավտոտնակը և սպասարկման համար զբաղեցրած հողամասն ուղղակի վաճառքով ձեռք բերելու մասին ներկայացնել գնման նախապատվության գրավոր առաջարկություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

20 23թ. հուլիսի 20
ք.Թումանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.city@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 ՀՈՒԼԻՍԻ 2023թվականի N 204-Ա

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով և հիմք ընդունելով Թումանյան համայնքի ավագանու 2022թ. հուլիսի 7-ի թիվ 40-Ա և թիվ 41-Ա որոշումները՝
Որոշում եմ.

1. 2023 թվականի հուլիսի 25-ին՝ ժամը 11^{00}-ին հայտարարել անշարժ գույքի վարձակալության մրցույթ՝ 2 լոտով:
Լոտ 1. Թումանյան համայնքի սեփականությունը հանդիսացող Թումանյան համայնք, գ.Լորուտ 06-045-0143-0044 կադաստրային ծածկագրի 1,00937հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության 4-րդ կարգի խոտհարք գործառնական նշանակության անշարժ գույքի վարձակալության մրցույթ: Մեկնարկային գինը սահմանել 15000 ՀՀ դրամ,մասնակցության նախավճարի չափը սահմանել մեկնարկային գնի 50%-ի չափով,մեկ քայլի չափը սահմանել մեկնարկային գնի 5%-ի չափով, մասնակցության վճարը՝ 5000ՀՀ դրամ:

Լոտ 2. Թումանյան համայնքի սեփականությունը հանդիսացող Թումանյան համայնք, գ.Լորուտ 06-045-0032-0035 կադաստրային ծածկագրի 0.60443 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության այլ հողատեսք գործառնական նշանակության անշարժ գույքի վարձակալության մրցույթ: Մեկնարկային գինը սահմանել 10000 ՀՀ դրամ, մասնակցության նախավճարի չափը սահմանել մեկնարկային գնի 50%-ի չափով,մեկ քայլի չափը սահմանել մեկնարկային գնի 5%-ի չափով,մասնակցության վճարը՝ 5000 ՀՀ դրամ:

2.Համայնքի սեփականությունը հանդիսացող անշարժ գույքի և այլ հիմնական միջոցների աճուրդային կարգով օտարող հանձնաժողովին հանձնարարել՝ նախատեսվող մրցույթի վերաբերյալ հայտարարությամբ հանդես գալ «Առավոտ» օրաթերթում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.city@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 ՀՈՒԼԻՍԻ 2023թվականի N 205-Ա

ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35 -րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման 29-րդ կետի գ) ենթակետով, ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարի 2021թ. մայիսի 10-ի <<Անշարժ գույքի հասցեավորման հայտի ձևը սահմանելու մասին>> N 104-Լ հրամանով, հիմք ընդունելով քաղաքացի Սեդա Ջանիբեկի Սարգսյանի դիմումը,ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը, տրված 19.07.2023թ /գրանցված է գրանցամատյանում 4153/ և համայնքային ծառայության առաջին կարգի մասնագետի առաջարկությունը՝

Որոշում եմ.

1.Սեդա Ջանիբեկի Սարգսյանին սեփականության իրավունքով պատկանող Լոռու մարզ,Թումանյան համայնք,գ.Դսեղ (ծած.06-035-0037-0005)բնակելի տանը և բնակելի կառուցապատման հողամասին, մակերեսի չափը՝ 0,212 հա տրամադրել նոր փոստային << ՀՀ Լոռու մարզ, Թումանյան համայնք, գ.Դսեղ,4-րդ փողոց,40 բնակելի տուն>> հասցե:

2.Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ**

20 23 թ. հուլիսի 24
ք.Թումանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.city@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 ՀՈՒԼԻՍԻ 2023թվականի N 206-Ա

ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35 -րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման 29-րդ կետի գ) ենթակետով, ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարի 2021թ. մայիսի 10-ի <<Անշարժ գույքի հասցեավորման հայտի ձևը սահմանելու մասին>> N 104-Լ հրամանով,հիմք ընդունելով քաղաքացի Ռուբիկ Վանոյի Շեկոյանի դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը՝ 0322423, տրված 04.08.2000 թ. և համայնքային ծառայության առաջին կարգի մասնագետի առաջարկությունը՝

Որոշում եմ.

1.Ռուբիկ Վանոյի Շեկոյանին սեփականության իրավունքով պատկանող Լոռու մարզ,գ.Դսեղ (ծած.06-035-0081-0008) բնակելի տանը, մակերեսի չափը՝ 275,7 քմ և բնակելի կառուցապատման հողամասին, մակերեսի չափը՝ 0,1 հա տրամադրել նոր փոստային << ՀՀ Լոռու մարզ, Թումանյան համայնք, գ.Դսեղ,54-րդ փողոց,3 բնակելի տուն>> հասցե:

2.Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ**

20 23թ. հուլիսի 25
ք.Թումանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.city@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 ՀՈՒԼԻՍԻ 2023թվականի N 207-Ա

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՆՈՐԱԾԻՆ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԾՆՈՂՆԵՐԻՆ ՄԻԱՆՎԱԳ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով<<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի, 24-րդ կետով, 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, հիմք ընդունելով Թումանյան համայնքի ավագանու 2022թ. դեկտեմբերի 27-ի <<Թումանյան համայնքի 2023թ. բյուջեն հաստատելու մասին>> թիվ 98 -Ն որոշումը, Թումանյան համայնքի ավագանու 2022թ. փետրվարի 18-ի <<ՀՀ Լոռու մարզի Թումանյան համայնքի կամավոր խնդիրները, կամավոր խնդիրներին ուղղված սեփական լիազորությունները և դրանց լուծման իրականացման կարգը սահմանելու մասին>> թիվ 19-Ա որոշումը ,Թումանյան համայնքի ղեկավարի 2022թ. օգոստոսի 17-ի <<Թումանյան համայնքում սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրները լուծելու համար հանձնաժողով կազմելու մասին>> թիվ 234-Ա որոշումը և Թումանյան համայնքում սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրները լուծող հանձնաժողովի եզրակացությունը՝

Որոշում եմ.

. Թումանյան համայնքի բյուջեի սոցիալական օգնություն խմբի այլ նպաստներ բյուջեից /հոդված 4729 /Թումանյան համայնքի նորածին երեխաների ծնողներին տրամադրել միանվագ դրամական օգնություն՝ համաձայն հավելվածի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

20 23թ. հուլիսի 26
ք.Թումանյան

Հավելված
Թումանյան համայնքի ղեկավարի
2023 թվականի հուլիսի 26 -ի N 207-Ա որոշման

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՆՈՐԱԾԻՆ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԾՆՈՂՆԵՐԻՆ ՄԻՆՎԱԳ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1.Ըստ ստացված դիմումների՝ Թումանյան համայնքի բյուջեի սոցիալական օգնություն խմբի այլ նպաստներ բյուջեից /հոդված 4729 / Թումանյան համայնքի ներքոհիշյալ նորածին երեխաների ծնողներին տրամադրել միանվագ դրամական օգնություն.

1) Հակոբյան Անուշ Գարեգինի - ք. Թումանյան - 20000 (քսան հազար) ՀՀ դրամ,
2) Ջանգիրյան Արմինե Հասանի - ք. Թումանյան - 20000 (քսան հազար) ՀՀ դրամ,
3) Քառյան Մարատ Կամոյի - ք. Թումանյան - 20000 (քսան հազար) ՀՀ դրամ,
4) Մխեյան Մարիամ Գուրգենի - ք. Թումանյան - 20000 (քսան հազար) ՀՀ դրամ,
5) Քառյան Հայկ Վանիկի - գ. Ահնիձոր - 20000 (քսան հազար) ՀՀ դրամ,
6) Սարգսյան Ռուզան Կամոյի - գ. Դսեղ - 20000 (քսան հազար) ՀՀ դրամ,
7) Ղազարյան Մելինե Արթուրի- գ. Դսեղ - 20000 (քսան հազար) ՀՀ դրամ:

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ